ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ճարտարապետության դոկտոր Վ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական դժվարին ճակատագրի բերումով հայ ժողովրդի ստվար հատվածներ ստիպված են եղել ցրվել աշխարհով մեկ, բնակություն հաստատելով տարբեր երկրներում։ Որտեղ էլ նրանք հանգրվանել են՝ ժամանակավորապես թե տևականորեն, հաղթահարելով նյութական սուղ պայմանները, կառուցել են վարժարանների ու մանկապարտեզների, հիվանդանոցների ու ծերանոցների, ակումբների ու խմբագրությունների և բաղմաղան բնույթի այլ շենքեր ու եկեղեցիներ։

Հայ գաղթավայրերում ծավալված շինարարական գործունեությունը գաղթավայրերի պատմության բաղկացուցիչ մասն է կազմում[1]։ Ահա թե ինչու դրա մասին նյութերի հավաքումը, մշակումն ու հրատարակումը նույնպես ուշադրության արժանի գործ է[2]։

Ի պատիվ եգիպտահայ գաղթավայրի գործիչների պիտի նշենք, որ Կահիրեում և Ալեքսանդրիայում մինչև 1927 թ. կատարված կառուցումների մասին նյութերը արդեն հրատարակված են[3]։ Պատկերն ամբողջացնելու համար անհրաժեշտ էր հավաքել և հրատարակել նյութեր դրանից հետո ընկած ժամանակաշրջանում կատարված կառուցումների մասին, որը և մենք ստորև հրապարակման ենք հանձնում, առայժմ ընդգրկելով միայն Կահիրեն, այն էլ առ 1970 թ.[4]։

1. Հայ Մարմնամարզիկների Ընդհանուր Միության Նուպար ակումբը Հելիոպոլսում կառուցվել է 1959 թ. Հայ Բարեգործական Ընդհանուր Միության ծախսերով (որի սեփականությունն է հանդիսանում ակումբը)։ Նախագծի հե-

---

1 *Ա. Գ. Աբրահամյանի «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության» (հատ. Ա, Երևան, 1964, հատ. Բ, Երևան, 1967) աշխատությունը, որն ըստ ամենայնի շնորհակալ գործ է, ցավոք, քիչ նյութեր է պարունակում գաղթավայրերի շենքերի ու նրանց կառուցողների վերաբերյալ։*

2 *Այդ ուղղությամբ որոշ քայլեր սկսվել են սփյուռքում։ Նկատի ունենք բեյրութահայ ճարտարապետ Փասկալ Բաղունյանի «Հայկական ճարտարապետությունը սփյուռքի մեջ» հոդվածը՝ տպված «Ահեկանում» (1970, N 1—2, Բեյրութ), որը նրա ծավալուն աշխատության համառոտագրությունն է։*

3 *Տե՛ս «Եգիպտոսի հայոց հին և արդի եկեղեցիները և պատմություն շինության Ս. Գրիգոր Լուսավորիչ նորաշեն եկեղեցվո Գահիրեի», Գահիրե, 1927, որում թեև հիմնականում ընդգրկված են Կահիրեի և Ալեքսանդրիայի հայկական եկեղեցիները, սակայն որոշ տեղեկություններ կան նաև այլ բնույթի շենքերի (հոգևորական, դարմանատուն, վարժարան) մասին։*

4 *Մեր խնդրանքով նյութերը հավաքել և մեզ է տրամադրել Կահիրեի Հելիոպոլիս արվարձանի նշանավոր Նուպարյան վարժարանի երկարամյա տնօրեն ու փորձառու մանկավարժ, գաղութի ճանաչված ու գնահատված գործիչ Տիգրան Պապիկյանը, որին մենք խորին շնորհակալություն ենք հայտնում։*

ղինակն է Ճարտարապետ Հարություն Մարգարյանը (ծնվ. 1906 թ. Կահիրեում)։ Ակումբն ունի սրահ և մարզադաշտ։

2. Հայ տան ուսհարկանի շենքը Կահիրեի կենտրոնական Սոլիման Հալաթ (նախկին Տուպրե) փողոցում, կառուցված է 1955 թ. Ճարտարապետ Հրազդան Պալյանի նախագծով։ Այստեղ գտնվում են «Արև» թերթի տպարանն ու խմբագրատունը, Հայ Գեղարվեստասիրաց Միության սրահը, գրադարանը և այլն։

3. Կոկանյան ակումբը Հելիոպոլսի Մենուֆ փողոցում, Նուպարյան վարժարանի դիմաց, կառուցվել է 1949 թ. Լևոն Կոկանյանի միջոցներով, Ճարտարապետ Նուպար Գևորգյանի (1888—1960) նախագծով։ Ակումբն օժտված է սրահով, բեմով, գրադարանով և ընդարձակ պարտեզով։

4. Հուսաբերի շենքը կառուցված է 1950 թ. Կահիրեի կենտրոնական թաղում Ճարտարապետ Հայկազուն Շիրինյանի նախագծով։ Մեծ շենք է, որի գետնահարկում տեղավորված են «Հուսաբեր» թերթի խմբագրատունն ու տպարանը, իսկ վերին երկու հարկերում՝ ընդարձակ թատերասրահը, հավաքույթների սրահները, գրադարանը և այլն։

5. Հուսաբերի ակումբը Հելիոպոլսում, Բելբուֆ փողոցում, Նուպարյան վարժարանի մոտ։ Երկհարկանի նորառաջ շենք է՝ օժտված սրահով և բեմով։ Կառուցվել է 1961 թ. Լևոն Գարագաշյանի միջոցներով ու Ճարտարապետ Հայկազուն Շիրինյանի նախագծով։ Սրահին կից կա մարզադաշտ, որը պատկանում է Հ. Մ. Ը. Մ. «Արարատ» մարզական միությանը։

6. Տիկնանց «Այծեմնիկ» միության Կարապետ Աբիկյան Հանգստյան տունը (ծերանոցը) Հելիոպոլսում, Աբդել Համիդ աբու Հեֆ փողոցում, կառուցվել է 1960 թ. Կարապետ Աբիկյանի նվիրատվությամբ, Ճարտարապետ Նուպար Գևորգյանի նախագծով։ Երկհարկանի շենք է 20-ից ավելի սենյակներով։ Ծերանոցին կից կա պարտեզ։

7. Աբգարյան դարմանատունը (հիվանդանոց) կառուցված է 1957 թ. Դրիգոր Լուսավորիչ եկեղեցու բակում, Ֆիլիպ և Արաքսի Աբգարյան ամուսինների նվիրատվությամբ ու Ճարտարապետ Հրազդան Պալյանի նախագծով. այդ առթիվ արձանագրված են հետևյալ տողերը. «Աբգարեան Ազգային Դարմանատունս Հայոց կառուցաւ նուիրատուութեամբ առն աղքատասիրի Ֆիլիբ Աբգարեան եւ բարեպաշտօն Տիկնոջն Արաքսիի ի յուշ անմոռաց հանգուցեալ ծնողացն Աբգարի եւ Փաշայի Աբգարեան որոց զհոգիսն Տէր ի լոյս երեսաց իւրոց հանգուսցէ, Ամէն։ Յամի Տեառն 1957 Ապրիլ 7»։

8. Գալստյան ազգային վարժարան. սրա հին շենքը Տարպ էլ Կենինա թաղում կառուցված է եղել 1854 թ. վանեցի Կարապետ Գալուստի (1802—1864) տրամադրած միջոցներով, և իր ցանկությամբ ի պատիվ պատմահայր Մովսես Խորենացու կոչվել է Խորենյան վարժարան։ 1897 թ. վարժարանը վերանվանվել է Գալստյան։

Հետագա տարիներին պահանջ է զգացվում մի նոր շենքի կառուցման։ Այն իրականացվում է 1907 թ. քաղաքի Մաարուֆ թաղի մեջ, Պողոս Նուպարի միջոցներով։ Մեկ տարի անց՝ 1908 թ. նույն հողամասում կառուցվում է նաև մանկապարտեզի շենք։ Ճարտարապետի անունը հայտնի չէ։

9. Նուպարյան ազգային վարժարանի առաջին շենքը կառուցվել է 1924 թ. Հելիոպոլիս Հայաշատ արվարձանում, Հայ բարեգործական Ընդհանուր Միու-



Նուպարյան վարժարանի ընդհանուր տեսքը



Նուպարյան վարժարանի բակը։

թյան հիմնադիր Պողոս Նուպարի միջոցներով և ճարտարապետ Մարկոսովի նախագծով։

Նույն հողամասում 1959 թ. կառուցվել է վարժարանի նոր շենքը՝ Կահիրեի Կրթասիրաց Ընկերության ծախսերով։ Գլխավոր մուտքի վրա տեղադրված արձանագրության մեջ ասված է. «Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն է։ Շինեցաւ Նուպարեան Ազգ. Վարժարանս Հայոց աստ ի Կահիրէ, Հելիոպոլիս արուարձանի առատաձեռն նուիրատուութեամբ կրթասէր ազգայնոց որ ի քաղաքս։ Հիմնարկէք կրթական յարկին եղեւ յամի 1958 յամսեանն Մարտի ի նախագահութեան Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոս եւ Սուրիա Կամալ Ապտել Նասէրի։ Ի Հայրապետութեան Ամենայն Հայոց Տեառն Տեառն Վազգենայ Սրբազնագոյն Կաթողիկոսի եւ յԱռաջնորդութեանն Հայոց Եգիպտոսի Տեառն Մամբրէի Սրբ. Արքեպիսկոպոսի եւ ճարտարապետութեամբ Հրազդանայ Պալեան։ Աւարտումն շինուածոյս եղեւ յամի Տեառն 1959 ամսեանն Յունուարի»։

10. Անաղարտ հղության քույրերի վարժարանը կառուցվել է Հելիոպոլսում 1952—1958 թթ. ընթացքում Եգիպտոսի հայ կաթոլիկական պատրիարքարանի նախաձեռնությամբ ու միջոցներով, ճարտարապետ Հրազդան Պալյանի նախագծով։

11. Մխիթարյան վարժարանը հիմնադրված է Վիեննայի Մխիթարյան միաբանության կողմից 1935 թ. Կահիրեի Տարպ էլ Կենինա թաղում։ Նախագծի հեղինակն է ճարտարապետ Կարո Պալյանը։ Նույն դպրոցի համար մի նոր շենք է կառուցվել 1959—1960 թթ. Հելիոպոլսում, տիկ. Արաքսի Ամբարյանի միջոցներով ու ճարտարապետ Հրազդան Պալյանի նախագծով։ Աշակերտության թվի նվազման պատճառով վարժարանը դադարեցնում է իր գործունեությունը և 1964 թ. շենքը տրամադրվում է դպտի կաթոլիկական պատրիարքարանին։

Բացի վերոհիշյալ խոշոր շենքերից, կառուցվել են նաև Գրիգոր Լուսավորչի եկեղեցին (գտնվում է Ռամզես պողոտայում, ավարտվել է 1928 թ.։ Կառուցվել է ռուսական փոխ-հյուպատոս Գրիգոր Եղիայանի միջոցներով, նախագծի հեղինակն է ճարտարապետ Լևոն Նաֆիլյանը), Հայոց Առաջնորդարանը (կառուցված է 1929 թ., եկեղեցու բակի մեջ, Տիգրան Ապրո Բագրատունու և Պողոս Նուպարի միջոցներով, նախագծի հեղինակն է ճարտարապետ Արամ Անդրանիկյանը, Առաջնորդարանի շենքում տեղավորված է նաև Թորգոմյան մատենադարանը, որի գրքերի ու պարբերականների թիվը շուրջ 7000 կտորի է հասնում), ս. Մինաս եկեղեցու (մատուռի) շենքը (գտնվում է հայկական ս. Մինաս կամ Մար-Մինա գերեզմանատան մեջ, Հին Կահիրե թաղում, կառուցված է 1843 թ.), Ամենայն սրբոց եկեղեցին (կառուցված է Հելիոպոլիս արվարձանի մոտ. Զարեհ Սագայանի նվիրատվությամբ և ճարտարապետ Հայկազուն Շիրինյանի նախագծով 1953 թ.), Հայ կաթողիկե Ավետման եկեղեցին (կառուցված է 1926 թ., համայնքի և Առաջնորդարանի միջոցներով, ճարտարապետ Կարո Պալյանի նախագծով, գտնվում է Կահիրեի գլխավոր փողոցներից մեկում, Առաջնորդարանը կից է եկեղեցուն), Հելիոպոլսի հայ կաթոլիկական ս. Թերեզա եկեղեցին (կառուցված է 1930 թ. ճարտարապետ Կարո Պալյանի նախագծով) և Հայ ավետարանական ժողովրդական եկեղեցին (կառուցվել է 1955 թ. Վիկտորյա Զաքրճյանի միջոցներով ու ճարտարապետ Հայկազուն Շիրինյանի նախագծով)։

* * *

Եգիպտոսի հայկական գաղթավայրի շինարարական գործունեության մասին վերը բերված համառոտ տեղեկությունները կուզենայինք լրացնել Եգիպտոսում գործած առավել նշանավոր հայ ճարտարապետներ Կարո Պալյանի և նրա որդի Հրազդանի ստեղծագործական կենսագրությամբ[5]։

Ճարտարապետ Կարո Պալյանը (1878—1960) ծնվել է Կ. Պոլսում։ Նրա հայրը՝ կեսարացի Պալի Պալյանը (1835—1911), բանդակագործ էր ու ճարտարապետ (առանց մասնագիտական կրթության)։ Կարո Պալյանն իր միջնակարգ կրթությունն ստանում է Կ. Պոլսի Մարբուհյան վարժարանում, ապա կատարելով ճարտարապետական սիստեմատիկ կրթություն ստանալու մասին իր հոր ցանկությունը՝ ընդունվում է Կ. Պոլսի Դեղարվեստից վարժարանի ճարտարապետական բաժինը և սովորում այն տարիներին, երբ միևնույն կրթական օջախում ուսանում էր հետագայում անվանի գիտնական Թորոս Թորամանյանը։ Որպես ճարտարապետ կյանք մտնելով, նա մի կարճ ժամանակ աշխատակցում է իր հորը Կ. Պոլսի «ոսկերիչների շարքի» շենքերի վերակառուցման գործում։ Վերահաս դեպքերը (հատկապես 1894—1896 թթ. հայկական ջարդերը) պատճառ են դառնում հայերի զանգվածային արտագաղթի։ Պալի Պալյանն իր որդուն ևս ստիպում է թողնել Կ. Պոլիսը և գաղթել սկզբում Էվրինե, ապա Բուլղարիա։ Այստեղ նա աշխատում է շուրջ հինգ տարի։ Բուլղարիայում իրականացված նրա գործերից հիշատակելի է Անծանոթ զինվորի կոթողը՝ Ռուսե քաղաքում, որի նախագծման համար հայտարարված մրցույթում իր ներկայացրած նախագիծը հավանություն էր ստացել։

1908 թ. ընտանիքով ուղևորվելով դեպի Արգենտինա, ճանապարհին ժամանակավորապես մտադրվում է կանգ առնել Եգիպտոսում[6], ուր, սակայն, հաստատվում է վերջնականապես։ Այստեղ նա ապրում և ստեղծագործում է մինչև իր բեղմնավոր կյանքի վերջը, ավելի քան կես դար։

Սկզբնական շրջանում աշխատակցելով խտիվ Աբբաս Հիլմի ճարտարապետ Ֆաբրիցիուսին, նախագծում և Կահիրեի կենտրոնական էմադ էլ Դին փողոցում կառուցում է չորս մեծ շենքեր, որոնք «Խտիվի շենքեր» անունն են կրում։ Այնուհետև Կարո Պալյանը հաջորդաբար նախագծում ու կառուցում է Ֆլէորանի շենքը էմադ էլ Դին փողոցում և երկու ուրիշ շենքեր։ Հետագա տարիներին ստեղծում է նախագծման իր դրասենյակը և աշխատում ինքնուրույն կերպով։ Այստեղ էլ անցնում է նրա ստեղծագործական կյանքի առավել արդասավոր

---

5 Կարո Պալյանի ստեղծագործական կենսագրությունը կազմված է «Արև» թերթում լույս տեսած (տարին, ամիսը և ամսաթիվը չունենք, անտարակույս իր մահվանից՝ 1960 թ. հետո) Արշակ Այպոյաճյանի «Անհետացող դեմքեր. Կարո Պալյան» հոդվածի, ինչպես նաև իր որդու՝ Հրազդան Պալյանի կողմից կազմված անտիպ կենսագրության հիման վրա։ Ճարտարապետ Հրազդան Պալյանի ստեղծագործական կենսագրությունը կազմելիս հիմնականում օգտագործել ենք «Հառակիր» թերթի 1965 թ. փետրվարի 4-ի և 11-ի համարներում լույս տեսած Վ. Ասրանազի «Հրազդան Պալի Պալյան» հոդվածը և այլ նյութեր։ Վերոհիշյալ նյութերը, ինչպես նաև Հ. Պալյանին վերաբերող մի շարք այլ տեղեկություններ մեզ տրամադրել է երևանաբնակ տիկ. Հայկանուշ Հովհաննիսյանը, որի համար հայտնում ենք խորին շնորհակալություն։

6 Եգիպտոսում հաստատվելու այս տարեթիվը բերված է ըստ որդու կազմած կենսագրության տվյալների։ Արշակ Այպոյաճյանի հիշատակված հոդվածում նշվում է 1901 թ. (որն ավելի ճիշտ է թվում)։



Ավետման եկեղեցին





Արիպյան հանգստյան տունը (վերևում)
և Ազգային առաջնորդարանը

շրջանը, որի ընթացքում նախագծում և կառուցում է բազմաթիվ ու բազմաբնույթ խոշոր շենքեր։

Վերը հիշատակվածներից բացի ճարտարապետ Կարո Պալյանի նախագծերով բավականաչափ շենքեր են կառուցվել Եգիպտահայ գաղթավայրի համար Կահիրեում և Կիպրոսում։ Դրանց թվին են պատկանում՝

— Մկրտչյան հաստատության դպրոցական շենքերի համալիրը Կիպրոսում (1924—1925),
— Հայ կաթողիկե Ավետման եկեղեցին և առաջնորդարանը Կահիրեում (1926),
— Հայ կաթոլիկական ս. Թերեզա եկեղեցին Հելիոպոլիս արվարձանում (1930),
— Միխիթարյան վարժարանի շենքը Կահիրեի Տարպ էլ Կենիա թաղում (1935),
— Մատուռ Զավադիկ քաղաքում,
— Քեչեկյան որբանոցի շենքերը Դորթ-Յոլում։

Դրանցից բացի, նրա նախագծերով կառուցվել են՝

— Էքսթադել հյուրանոցը իր հեռագրատնով, Կահիրեի Հուլիսի 23-ի փողոցում,
— Էր-Ֆրանսի շենքը Սոլիման փաշայի փողոցում,
— Շեմլա հայտնի վաճառատունը, նույնպես Հուլիսի 23-ի փողոցում,
— Սիկյուրել հայտնի ու մեծ վաճառատունը նույն փողոցում[7],
— Մաթոսյանին պատկանող ծխախոտի գործարանի շենքը Դիզե թաղում[8],
— Կամսարականներին պատկանող ծխախոտի գործարանը Կահիրեի մոտակայքում գտնվող Զավագիկ քաղաքում,
— Հովհաննես բեյ Մաթոսյանի մենատունը Ալեքսանդրիա քաղաքի Զիզինիա թաղամասում,
— Կարապետ Մաթոսյանի մենատունը Կահիրեում, Սոլիման փաշա փողոցում,
— Մաթոսյան ծխախոտի գործարանի տնօրեն Մասրաֆի մենատունը Դիզեում,
— Պոնթրեմոլի կահույքագործի շենքը Կահիրեում Սոլիման փաշայի փողոցում և նույն անձին պատկանող երկու այլ շենքեր Բուսթան և Դարամալլի փողոցներում,
— Ֆարուք Ա թագավորի զարմիկ իշխան Ամր Իբրահիմի որդու արարառոտ պալատը Զամալիքի թաղում,
— Թահեր փաշայի արարառոտ դամբարանը հին Կահիրեի մոտ գտնվող խալիֆաների կերեզմանատանը,
— Նչան Յաղուբյանի բազմահարկ շենքը Սոլիման փաշա փողոցում։

Պրակտիկ գործունեությունից բացի Կարո Պալյանը զբաղվել է գիտական հետազոտությամբ ճարտարապետության ասպարեզում, բազմաթիվ հոդվածներով աշխատակցել լրագրերին, պարբերականներին, օրացույցներին։ Նրա հեղինակությամբ հրատարակված են երկու կարևոր աշխատություններ։ Դրանցից առաջինը, որ «Դեպի լույս» անունն է կրում, նվիրված է դպրոցական շենքերի ուսումնասիրությանը։ Առավել հանրահայտը նրա «Եգիպտոս և արաբական ճարտարապետությունը» (Կահիրե, 1917) աշխատությունն է։ Ծավալուն այս գրքում (253 էջ, շուրջ 90 նկարներ, այդ թվում՝ գծագրեր ու հատակագծեր) տրվում է արաբական ճարտարապետության կազմավորման ու զարգացման հանգամանալից պատմությունը՝ սկսած խալիֆաթի առաջացման ժամանակներից մինչև XIX դարի վերջը, մեծ հմտությամբ ու բաջատեղյակությամբ բնութագրված են զարգացման առանձին փուլերը, կարևորագույն հուշարձանները։

---

[7] 1923 թ. տեղի ունեցած հրդեհի ժամանակ վնասված Սիկյուրել վաճառատունը վերակառուցվել է Կ. Պալյանի կողմից, իսկ 1937 թ. նրա որդի Հրաչդան Պալյանը արդիական ոճով վերակառուցել է շենքի ճակատը։

[8] Այս շենքը 1958 թ. քանդվում է և նրա տեղում Հրաչդան Պալյանի նախագծով կառուցվում են հինգ նոր շենքեր։

Ճարտարապետ Կարո Պալյանը Եգիպտոսում հանրածանոթ դարձավ ոչ միայն իր մասնագիտական գործունեությամբ. նա միաժամանակ գաղթավայրի նշանավոր հասարակական գործիչներից էր։ «Կարո Պալյանը,— գրում է հիշատակված հոդվածում Արշակ Ալպոյաճյանը,— միշտ շահագրգռվածություն ունեցած է ազգային-հասարակական կյանքին նկատմամբ և անոր բերած է իր մասնակցությունը՝ անդամակցելով Ազգային Առաջնորդարանի ժողովներուն, մասնավորապես իբրև երեսփոխան Թեմականի, մասնակցած և վարած է Գալուստյան վարժարանի հոգաբարձությունը և Եգիպտյան հանձնաժողովին ատենապետությունները»։ Նրա տունը Կահիրեի հայ մտավորականության սիրված հավաքավայրն էր։ Պալյան ամուսինների ընտանիքում, երաժշտության, գրականության ու արվեստի սիրողների միջավայրում, հաճախ ժամանցի էին հավաքվում գաղթավայրի նշանավոր դեմքերը՝ պատմաբան Արշակ Ալպոյաջյանը, երգիչ Արմենակ Շահմուրադյանը և ուրիշներ։

Այսպիսով, ճարտարապետ Կարո Պալյանը մեկն էր եգիպտահայ գաղթավայրի գործիչներից, որը դարիս առաջին կեսի ընթացքում զգալի ներդրում կատարեց գաղթավայրի շենացման ուղղությամբ մղված ջանքերում, նույն ոգով դաստիարակելով իր որդուն՝ ճարտարապետ Հրազդան Պալյանին։

Ճարտարապետ Հրազդան Պալյանը ծնվել է Կահիրեում 1913 թ. հունվարի 30-ին։ Միջնակարգ կրթություն ստացել է տեղի Գալստյան ազգային վարժարանում, ապա՝ ֆրանսիական լիցեյում, երկու տեղում էլ ցուցաբերելով բարձր առաջադիմություն։

Ճարտարապետական կրթություն ստանալու համար 1932 թ. հայրը նրան ուղարկում է Փարիզ։ Սովորելով Ֆրանսիայի հռչակավոր Գեղարվեստի ազգային բարձրագույն դպրոցում (L'école Nationale Supérieure des Beaux Arts de Paris), Հրազդան Պալյանը այստեղ ևս իրեն դրսևորում է որպես ուշիմ և ջանասեր, մեծ ընդունակություններով օժտված ուսանող։ Այդ մասին են վկայում ուսումնառության տարիներին նրա ստացած 18 մրցանակները, որոնցից 7-ը՝ ճարտարապետական առաջադրանքների կատարման համար։ 1937 թ. փետրվարին նա պաշտպանում է իր դիպլոմային նախագիծը՝ թեմա ունենալով վանքի մի համալիր Կիպրոսում։

Ճարտարապետի դիպլոմով ու Ֆրանսիայի ճարտարապետների միության արծաթե մեդալին արժանացած (1937 թ.) Հրազդան Պալյանը ստեղծագործական կյանք է մտնում՝ առաջին իսկ աշխատանքներում ունենալով փայլուն հաջողություն։ Այդ հաջողությունները նրան ուղեկցում էին ուսանողական տարիներից, երբ իր դասընկեր՝ բելգիացի Ռոբեր Ստոկենի հետ մշակած Անտվերպենի թաղական վարժարանի շենքի նախագիծը հավանություն ստացավ և իրականացվեց։ Այնուհետև, անգլիացի ճարտարապետ Ստենլի Վերերի հետ միասին մասնակցում է Դուբլինի քաղաքապետարանի ջրային բաժնի համար շենք նախագծելու նպատակով հայտարարված մրցույթին և արժանանում գրամական մրցանակի։

1937 թ. Հ. Պալյանը վերադառնում է Կահիրե և այստեղ ծավալում իր հետագա գործունեությունը։ Հաջորդ տարին նա հոր ղեկավարությամբ իրականացնում է նախապատերազմյան տարիներին հոր նախագծերով կառուցված մի քանի շենքերի (Սիկյուրելի վաճառատան, «Հոթել դը Ռոզ»-ի և «Շել»

ընկերության լողավազանի ու հարակից շինությունների) վերակառուցումը՝ ճարտարապետական առումով արդիականացնելու նպատակով։

Բեղմնավոր է եղել տաղանդաշատ ճարտարապետի ստեղծագործությունը հետպատերազմյան տարիներին. այն ընթացել է բազմազան ու բազմապիսի շենքեր նախագծելով ու կառուցելով ինչպես Եգիպտոսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։ Դրանցում Հրազդան Պալյանը դրսևորել է իրեն որպես արդի ճարտարապետության խնդիրները լավ ըմբռնած, շինարվեստի նոր հնարավորությունները լայնորեն կիրառող բարձր մակարդակի վրա կանգնած մի ճարտարապետ։ 1946—1964 թթ. նա նախագծում և կառուցում է մեծ թվով շենքեր։ Առանց նկատի ունենալու Կահիրեում և Ալեքսանդրիայում կառուցած բազմաթիվ մենատները, ստորև ժամանակագրական կարգով տալիս ենք դրանց ցուցակը.

1946 թ.— Ֆրանս-եգիպտական երկսեռ և գիշերօթիկ վարժարանի շենքերի խումբը,

1947 թ.— Եգիպտացի 12 ճարտարապետների թվում մասնակցություն հրեական Աշքենազի տաճարի նախագծման մրցույթին (առաջին մրցանակ), «Օրյուս» յոթ հարկանի շենքի նախագծումն ու կառուցումը Զամալեքում, «Էլ Պոնս» էլեկտրական ընկերության աշխատանոցներն ու պահեստները Ռոդ էլ Ֆարակի թաղամասում և դրասենյակները՝ Կաուատ Հոսնի փողոցում,

1948 թ.— «Էլ Պոնս» ընկերության տասներեք հարկանի շենքը Նեղոսի ափին (ճարտ. Անտուան Նահասի հեղինակակցությամբ)։ Նույն թվականին մասնակցելով Ագիս-Աբեբայում եթովպական ազգային ոճով կառուցվելիք արքայական պալատի նախագծման միջազգային մրցույթին, արժանանում է «Պատվո հիշատակության» խրախուսական մրցանակին։ 1948 թ. նախագծել և կառուցել է նաև ապահովագրական «Յունիոն Վիթ» ընկերության 16 հարկանի շենքը Զամալեքում, Նեղոսի ափին,

1948—1949 թթ. Գարդն Սիթի թաղամասում կառուցում է «Իդիս» և «Օլիրա» շենքերը՝ յուրաքանչյուրը ութհարկանի և կանաչապատված տանիքով,

1949 թ.— Սինեմա ռադիոյի դահլիճը և նրան կից խանութների և գրասենյակների շենքը,

1950 թ.— Սուեզի ջրանցքի ընկերության վարչական շենքը Գարդն Սիթի թաղամասում (որի համար հեղինակն արժանանում է ֆրանսիացի անվանի ճարտարապետների բարձր գնահատանքին),

1951 թ.— Նույն ընկերության երկու բարձրաստիճան պաշտոնյաների մենատներ և նրանց կից ընդունելությունների տան ներքին ձևավորումը, ինչպես նաև Անաղարտ հղության հայ քույրերի վարժարանը Հելիոպոլսում,

1953 թ.— «Յունիոն Վիթ» 10 հարկանի շենքը Կաուատ Հոսնի փողոցում (շենքի աստիճանաձև վերջին 5 հարկերի կտուրները կանաչապատված են),

1954 թ.— «Լանդ ընդ Բիլդինգ» ընկերության հանձնարարությամբ Ալեքսանդրիայի Մամոտայի արվարձանի գլխավոր հատակագծի մշակումը, որը ավարտվեց 6 ամսվա ընթացքում ու ներկայացվեց կառավարության հաստատմանը (իրականացումը շարունակվում է),

1955 թ.— Ֆրանսիական հիվանդանոցին կից ծննդատան և վիրաբուժարանի մասնաշենքերը (որոնց բացման առթիվ հեղինակն արժանացել է ֆրանսիական կառավարության պաշտոնական ներկայացուցիչների գնահատանքին), «Հայտուն» բազմահարկ շինությունը (որում տեղավորված են «Ուրևս» օրաթերթի տպարանն ու խմբագրատունը և Գեղարվեստասիրաց միության դահլիճը),

1956 թ.— Թեյմուր բանաստեղծի ութհարկանի շենքը Զամալեքում, «Շելլ» ընկերության բենզինի հետազոտության փորձառական վարժարանի շենքը նույն ընկերությանը պատկանող մարգագաշտում։ Առաջին մրցանակ (արաբ երկու ճարտարապետների գործակցությամբ) Էր-Ռիադ մայրաքաղաքում կառուցվելիք արաբական խոշոր համալսարանի և համալսարանական քաղաքի նախագծման համար հայտարարված միջազգային մրցույթում (կառույցը չի իրականացված),

1957 թ.— Առաջին մրցանակ (ճարտ. Ֆրեսկոյի հետ) Թեֆիքիե մարմնամարզական ակումբի նախագծման մրցույթում (կառույցը չի իրականացված),

1958 թ.— Գիզեի ծխախոտի գործարանի և հարակից (Նախկինում Մաթոսյան հաստատությանը պատկանող և իր հոր՝ Կ. Պալյանի նախագծերով կառուցված) շենքերի վերակառուցումը և նոր մասերի հավելում։ Նույն թվականին է վերարերում Նուպարյան ազգային վարժարանի շենքը, որի նախագիծը (ինչպես նաև աղգապատկան մի շարք ուրիշ շենքերի՝ Գալստյան ազգային մանկապարտեզները՝ Շուպրայում, Արգարյան հիվանդանոցները՝ Առաջնորդարանին կից, Գալստյան ազգային վարժարանի նոր շենքը և այլն), կատարել է անվճար,

1959 թ.— Վիեննայի Մխիթարյան միաբանության վարժարանի շենքը Հելիոպոլսում։ Այդ թվականին արար երկու ճարտարապետների գործակցությամբ մասնակցել է Կահիրեի Հելուանի արվարձանում կառուցվելիք արվեստարանության վարժարանի շենքի նախագծման համար հայտարարված մրցույթին (երկրորդ մրցանակ),

1960 թ.— Մասնակցություն սովետական մասնագետների ուժերով քիմիական (դեղորայքի) մեծ գործարանի նախագծման և հատակագծման աշխատանքներին, որի համար գործարանի հանդիսավոր բացման օրը (1964 թ. մայիսի 14) ստանում է Արաբական Միացյալ Հանրապետության բարձրագույն պարգևը՝ Առաջին կարգի շքանշանը՝ «Երկրի առաջադիմության գործում ունեցած ներդրման կապակցությամբ»,

1961 թ.— Էլեկտրական սառնարանների և կոնդիցիոներների «Իդեալ» ընկերության մեծ գործարանի նախագիծը, որը նույն թվականից սկսել է իրականացվել։

Հետագա տարիներին[9] Հրաչդան Պալյանի նախագծերով կառուցվում են «Իսթիրն» ծխախոտի գործարանի պահեստային ու գրասենյակային շենքերն Ալեքսանդրիայում, «Սալոնիկա» ծխախոտի գործարանի լրացուցիչ շենքերը, գրասենյակները, հիվանդանոցը, աշխատանոցները, պահեստները և այլն։

Նրա մշակած նախագծերի թվին են պատկանում նաև Ջոմմորում (Գիզեի արվարձանում) կառուցվելիք թղթի և խավաքարտի պահեստների, Շուպրայի մեջ կառուցվելիք «Ոսթիրն» ընկերության սիգարետների մատակարարման գրասենյակի և պահեստների, նույն ընկերության 3-րդ գործարանի շենքերը, ինչպես նաև 15 հազ. տեղանոց մարզադաշտը՝ մեծ լողավազանով, ամառային ու ձմեռային թատրոններով և հարակից այլ շենքերով։

Հրաչդան Պալյանի վերջին տարիների գործերի մասին որոշ տեղեկություններ ենք քաղում մի փաստաթղթից՝ տիկ. Հայկանուշ Հովհաննիսյանին (Երևան) Կիպրոսից գրած նրա 1970 թ. ապրիլի 15 թվակիր նամակից։ Ինչպես գրում է նամակում, 60-ական թվականների վերջում որոշ հանգամանքների բերումով նա 2 տարի աշխատել է Նիկոզիայում (Կիպրոսում), ստանձնելով շինարարական մի ընկերության ճարտարապետի և տնօրենի պաշտոնը։ Այստեղ նրա նախագծով կառուցվել է ութհարկանի մի մեծ բնակելի տուն՝ գրասենյակներով ու խանութներով, երեք մենատներ, տուրիստական ընկերության տուն, ցուցադրական կենտրոն և այլն։ Նույն նամակում հայտնում է, որ Կահիրեում ավարտին է մոտենում ծխախոտի մաքսատան խոշոր շենքը։

Հետևելով հոր օրինակին, Հրաչդան Պալյանը նույնպես իր մասնագիտական աշխատանքը տարիներ շարունակ զուգակցել է հայրենանվեր հասարակական գործունեության հետ գաղթավայրի տարբեր կազմակերպություններում։ Նա գործուն մասնակցություն է ցուցաբերում Կահիրեի թեմական և քաղաքական ժողովներում, անդամ է Հայ Բարեգործական Ընդհանուր Միության Եգիպտոսի կենտրոնական հանձնաժողովի։ Հրաչդան Պալյանը ջերմեռանդ հայրենասեր է, Սովետական Հայաստանի անկեղծ բարեկամը։ Նա հե-

9 Հրաչդան Պալյանի գործերի մասին հոդվածում հիշատակված տեղեկությունները վերաբերում են մինչև 1965 թ. ժամանակամիջոցին։

տևում է բարգավաճող հայրենիքի բոլոր նվաճումներին, ուրախանում նրանցով։

Վերջում անհրաժեշտ ենք համարում նշել, որ Կահիրեի հայերի 1927—1970 թթ. շինարարական գործունեության վերաբերյալ վերևում բերված նյութերը պետք է լրացվեն Ալեքսանդրիայի հայկական գաղթօջախում կատարված կառուցումների վերաբերյալ նյութերով։ Դրանով հնարավոր կդառնա ամբողջացնել եգիպտահայ գաղթավայրի տվյալ ժամանակահատվածի շինարարական գործունեության պատմությունը։

ИЗ ИСТОРИИ СТРОИТЕЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ЕГИПЕТСКОЙ АРМЯНСКОЙ КОЛОНИИ

Доктор архитектуры В. М. АРУТЮНЯН

(Резюме)

В настоящем сообщении приведены сведения о строительной деятельности в армянской колонии в Каире за 1927—1970 гг., а также данные о видных архитекторах Каро и Раздане Палянах.